



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5835(2f)

23502 -

23504(3f)

5211 (7fund.)

8073-8075
(9fund.)

929

5-96

~~4428~~
5835

(27)

ԵՐԵՔ ՃԱՌՔ

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ




ԱՍԱՑԵԱԼՔ ՅԵՐԻՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ ՎԱՍՆ ԼՆՋՄԱՆ ՆԻ ՅՈՒՂԱՐԿԱԴՈՐՈՒԹՅԱՆՑ

ՎԱՍՆ ԵՐԱՆԱԾՆՈՐԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՊՈՆՏՈՍԻ

ԳԵՐ. ԳԵՐ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԵՐԱՊՈՏԵՄԱՌԻ ԿԻՐԱՆԵԱՆ

1874 ՕԳՈՍՏՈՍ 18

Ի ՏՕՆԻ ՓՈՒՄԱՆ ԱՄԵՆՕՐՀՆԵԱԼ Ս. ԿՈՒՍԻՆ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՑԵԱՆ

1874

ԵՐԵՔ ՃԱՌՔ

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ






ԱՍԵՆԱԼԻՔ ՅԵՐԻՑ ՎԱՐԳԱՊԵՏՈՅ ՎԱՍՆ ՆՆՋՄԱՆ ԵՒ ՏՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԵԱՆՑ

ՎԱՍՆ ԵՐԱՆԱԾՆՈՐԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՊՈՆՏՈՍԻ

ԳԵՐ. ԳԵՐ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԵՐԱՊՈՅՅԱՌԻ ԿԻՒՐՂԵԱՆ

1874 ՕԳՈՍՏՈՍ 18

Ի ՏՕՆԻ ՓՈՒՄԱՆ ԱՄԵՆՕՐՀՆԵԱԼ Ս. ԿՈՒՍԻՆ




Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. ԳԱՎԱՅԵԱՆ

1874

13553



481
40 9

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Այս ձառերը տպուէրուն պատճառը այս է՝ որ այս Երաւունչնորն Եպիսկոպոսը անմոռաց յիշէրն համար, իրեն յիւտնն և երկոշ տարուան տուած բարի օրինակները, և իրեն սուրբ վարուցը յիշատակները բոլոր ազգականք, բարեկանք, և ոչդարիաւ ժողովուրդը խոկան՝ մտածեն և իրեն այս մաքրակեցւող վարուցը հետեւին, և աղօթելով անմոռաց յիշատակը պահեն =





ԳԵՐ. ՅՈՎ. ՀԱՆՆԷՍ ԳԵՐԱՊՈՍԵՄԱՐ
ԿԻՐԴԵԱՆ
ՆՊԻՍԿՈՓՈՍ ՊՈՆՏՈՒԻ

Երանի որ հալածեալ իցեն վասն
արդարութեան , զի նոցա է ար-
քայութիւն երկնից : Մատթ. Ե. 10.

Այս տխուր դամբանիս առջին , որ կիւրղեան Գերդաստա-
նէն Տրապիզոնի Եպիսկոպոսը Յովհաննէս Գերապայծառին յան-
կարծահաս գուժարեր մահուան յիշատակն հոս կանգնուած
կը տեսնենք , իրեն բարեյիշատակ հոգւոյն համար քաւութեա-
նըն Պատարագը մատուցանող հալածեալ բազմադիւն Արքե-
պիսկոպոսիս , ժամանակիս դառն հարուածներէն տառապեալ
Աթոռոյն պաշտպան հանդիսացող կաթողիկոսական Տեղապա-
հիս , քաջասիրտ և վեհանձն կղերիս , հարստահարեալ՝ բայց
միշտ հաւատարիմ կեցող ժողովրդեան սգալից ու թախծազին
սրտին երբ կը յիշեցնեմ այս Աւետարանական սրբազան պատ-
դամը , կը բաղձայի որ իմ ամէն մէկ հառաջանքներուս , խօս-
քերուս և շարժմունքներուս հետ նոյն պատգամը դուք ալ ին-
ծի հետ հոս կրկնէիք : “Երանի որ հալածեալ իցեն վասն ար-
դարութեան , զի նոցա է արքայութիւն երկնից ” :

Այո՛ , Արհիապատիւ Տեառք , յարգոյ կղեր , և Աստուածա-
սէր յողովուրդ , այս դամբանիս բողոքօրէքը պատած այդ բազ-
մաթիւ խումբին , այդ խորին ակնածութեան , այդ մտաց և
սրտից խորհրդաւոր հիացման , այդ վշտաց հանդիսին մէջ եր-
կինքէն իջած արդարութեան մէկ նշոյլ մը կը տեսնեմ , որ այս
ազնիւ և դիւցազն Եպիսկոպոսին շիրմին վրայ ցոլանալով՝ յար-
գանաց և մեծարանաց նուէրը հանդիսապէս կը մատուցանէ ա-
նոր երկրիս վրայ վարած բազմավիշտ կենացը , և անոր անունը
ապագայ դարերուն կը յանձնէ անմուաց մէկ աւանդ մը , օրհ-
նեալ ՚ի շրթանց իւր արիացեալ հօտին , և համօրէն կաթողիկ-
եայ Ազգիս :

Այս դամբանս՝ որ մահուան ստուերաց մէջ մեր արտօսրաթոր աչաց առջեւ կանգնած կը տեսնենք, այո՛ առանց արեան, բայց մարտիրոսական արդեամբ վախճանեալ Եպիսկոպոսիս յաղթանակի կոթորն է, որ նոր հերձելոց մղած պատերազմին դաշտին վրայ իրեն նորին տակ արիապէս նկուն ըրաւ, ոչ միայն ապականեալ աշխարհիս սկզբունքները, այլ և ազգային մոլոր վարդապետութեանց ճիգը ու զօրութիւնը, և հիմայ իրեն անսասանելի արիութեան փառացը լուսոյն մէջ թաղուած, որ այս իրեն Դամբանը շրջապատող նիւթական լուսէն աւելի փառաւոր փայլմամբ մը կը շողայ իր շիրմին վրայ, մեր ամէնքնուս սիրտը և միտքը իրեն կը գրաւէ, և զմեզ կտախտէ այդ սրբազան Աւետարանական պատգամը կրկնելու թէ «Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից», պատգամ մը, որ չէ թէ միայն մխիթար կը մատուցանէ իրեն սգալից հօտին, և ազգիս թախծագին սրտին, այլ մանաւանդ թէ ցնծութիւն կը պատճառէ ամէնքնուս ալ, վասն զի ՚ի նա, և նովաւ երկնից օրհնութեանց, և բովանդակ հաւատացելոց յարդանաց և մեծարանաց արժանի հանդիսացանք :

Ո՛ր Տեարք, Տրապիզոնի առաքինազարդ Եպիսկոպոսը, կիւրղեան Յովհաննէս Գերապայծառը մեռաւ . այո՛, այլ անոր դերեզմանը մահկանացուաց ցուրտ մոխիրներուն և չորացեալ ոսկերաց մէջ մի՛ վնտուէք : Անոր Գերեզմանը իրեն արիացեալ հօտին գիրկը, և այս ազգիս սրտին մէջն է : Հոն, հոն պէտք է որ նշմարենք զանի, և հոն իրեն մատուցանենք մեր վերջին հրաժեշտի ողջոյնը, մեր վերջին օրհնութեանց, և մաղթանաց նուէրը :

Ծանօթ է ձեզի, ո՛ր Տեարք, թէ բնութիւնը ամենէն ազնուական և չնաշխարհիկ առաքինութիւններուն օժիաներովը զարգարած էր Յովհաննէս Եպիսկոպոսը : Նոյն իսկ դեռաբթիթ հասակին իբրեւ ճշմարիտ Եկեղեցական մը զարգացաւ, որուն վրայ հազուադիւս ճրից, և երկնային անզուգական շնորհաց առատարաշխ պարգեւները այնպիսի անպատմելի զարդ և

փայլ մը աւելցուցած էին, զոր իրեն ապագայ առաքինութեանց
ասպարէզը ըլլալու բաղդն ունեցած երկիրը, և յիսուն տարիէ
աւելի իրեն փահանայական խնամքը, և օրհնութիւնները վա-
յերող հաւատացեալները յաւիտեան անմուաց պիտի պահեն
իրենց սրտին մէջ :

Բարեյիշատակ Հանգուցելոյս բնական ճրից օժիտը՝ առատ,
ընտիր, և անզուգական էին, բայց չէին կրնար զինքը այդչափ
կատարելութեան հասցնել. որով այժմ մեր միտքը դրաւելու-
արժանացած է, եթէ իր մարմնեղէն մտաց և զգացմունքնե-
րուն անձուկ սահմանէն դերագոյն եղող հոգեղէն վեհմ և ճշ-
մարիտ սկզբունքով մը իրեն միտքը և սիրտը տողորած չըլլար :
ինքը իր գիտութեան, խոհեմութեան, հաւատարմութեան, և
խմտաութեանը մէջ խոնարհաբար կը խոստովանէր թէ՛ իրեն
վրայ դանուող ամէն ձիրքը Աստուծոյ պարգեւն է, ոչ եթէ
խրոխտ բանականութեան մտացածին Աստուծոյն, այլ Աստու-
ծոյն փրկատունէից, որուն գոյութեան, մարդեղութեան, և հը-
րաշալի գործոց բոլոր մարդկային սեռին պատմութեան էջերը
հանգիստական վկայ են :

Այսպէս լուսահոգի Հանգուցելոյս բոլոր վարքը ու կեանքը
այս ամենաբարերար և ամենակարող Աստուծոյ անսահման յառ-
կութեանց հարազատ նմանութիւնն էր, որ մեզի ուրիշ վախճան
մը չէ կարգած բայց եթէ նոյն իսկ ինքը զինքը, և որն որ միշտ
մեր սիրտը իր լուսոյն և երանութեանը կը յանկուցանէ իրբեւ
մեր ճշմարիտ նպատակը ու կեդրոնը :

Այս գիւցազն Եպիսկոպոսը իր կեանաց ամէն վայրկեանին
մէջ ճշմարտութեան երկնաւոր ձայնին հետեւելով, որ իրեն
սրտին կը խօսէր, չթողուց երբէք որ ժամանակիս ստութեան
մշուշը իր մտաց աչքերը նսեմացնեն, և ուրուական պատկերը
իրականութեան գեղ, և երեւակայական ցնորքը յաւիտենական
արդարութեան փոխարէն իրեն հաւանեցնեն : Թէպէտ և ներ-
կայ թեթեւամիտ դարոյս շրջանին մէջ իր կեանքը վարեց, այլ
Հռովմայ Գահին, այդ ընդհանուր և ճշմարիտ Հաւատացելոց

Մօրը կաթին հետ ծծած էր այնպիսի հաւատք մը, որ ընդունած բարի կրթութեան օգնականութեամբը անդդուելի արմատացած էր իր սրտին մէջ, զոր ընտիր, գերբնական և առաքինի գործովք միշտ կենդանի պահելով թէ այս վշտաց հովտիս մէջ ամէն մահկանացուաց բաժինն եղող ներդրեանց և տառապանաց ատեն, և թէ մասնաւորապէս իր Եկեղեցական վիճակին մէջ իրեն, և հաւատացելոցը դէմ մղեալ կրօնական պատերազմին ժամանակը միշտ կատարելապէս ֆրիստոսի ճշմարիտ ֆահանայ, Առաքեալ, և ախոյեան հաւատոյ հանդիսացաւ: Այո՛, ֆահանայ, Առաքեալ, և ախոյեան հանդիսացաւ իր Եպիսկոպոսական պարտուց մէջ: Եւ այս Աստուածային կրօնից մէջ մեծ, և սրբազան պաշտօնին պարտականութիւնը յօժարակամ յանձն առած էր, վստահ ըլլալով յԱստուած, որ օրհնեց իր Առաքեալները ձիթենեաց լեռանը վրայ, և սրբեց զանոնք ՚ի հոգին կենդանարար:

Ուստի իր աղնիւ սրտին անձնանուէր զգացմանց հնազանդելով, վերնական օրհնութեան արդասիքը իրեն հօտին վրայ տեւնուեցաւ, մանաւանդ այս դառն պարագաներուս մէջ, հիւսելով միանգամայն իրեն օծեալ ճակտին վրայ անարատ և անվթար պահած Եպիսկոպոսական արիւթեան վառաւոր պսակը:

Դուք, ո՛ հաւատացեալքդ Տրապիզոնի, և Որդի՛ք այս աղնուասիրտ Հօր, սրբեցէ՛ք ձեր աչաց արտօսքը, և այդ ձեր խոստովանող Հովուին, որոյ հոգին սրբուած մահուան այս ցուրտ դամբանիս վրայ կը շրջի, այդ ձեր խոստովանող Հովուին, կը սեմ, իրաւացի եղող դրուաստիքը մատուցէ՛ք: Այո՛, ըսէ՛ք, այս ալեւոր Եպիսկոպոսին ձեզի ունեցած հայրական անկեղծ և հարազատ սէր և ինամբէն աւելի հօր մը իր զաւակաց վրայ սէր և հոգացողութիւն ունենալը հնա՛ր էր արդեօք: Բոլոր ազգը վրկայ է, թէ այս անզուգական Հայրը և Հովիւը իր որդիքը և հօտը իսանդաղակաթ սիրով մը սիրեց, և այս իր գորովազուծ սիրոյն սրտաշարժ ցոյցը ու հաւաստիքը նաեւ մինչ իր մահուան

անկողնոյն մէջ ընծայեց : Հանգուցելոյն հրաժեշտի ողջոյնը իր Եպիսկոպոսական սրտին վերջին զեղումն էր , որ որդիական սիրոյն վառարանին վրայ միշտ անչէջ պիտի բորբոքի փոխադարձ անմուաց յիշատակաւ :

Հարկ կայ արդեօք յիշելու իր հօտին հաւատոյ և բարի վարուց մէջ տուած այն կատարեալ և աղինւ դաստիարակութիւնը երբ ահա անոնց սքանչելի օրինակը մեր աչաց առջեւ կը տեսնանք : Անոնք են որ այս դառն պարագայիս մէջ ազգիս վեհանձն հաւատացելոց ընտիր մէկ մասը կը կազմեն , և կաթողիկեացոս առանձին յարգանաց , և մեծարանաց , և ընդհանուր Եկեղեցւոյս համարման և պատուոյ արժանի հանդիսացած են : Այս պատճառաւ զարմանք չէ որ Յովհաննէս Եպիսկոպոսը մահկանացու կեանքը կնքելուն օրը Նոյն վիճակին մեծամեծաց , ազքատաց , որբոց եւ այրեաց առ հասարակ սգոյ օր մը եղած էր , որոնք իրենց հայրը կորսնցուցած բլլալնուն վրայ անմխիթար ցաւոց մէջ կը հեծէին : Լսեցինք ամէնքս ալ ինչպէս այն սգալից օրը բոլոր իր Հօտը մահուան դագաղին ետեւէն սրտաբեկ կը հառաչէր , ու կողբար , և սրտաշարժ ցաւօք իր խոստովանող Եպիսկոպոսին յուղարկաւորութեանը կրնկերակցէր : Այն , այն օրը այդ Հանգուցելոյն սգապատ դագաղին վրայ հանդիսացաւ պարտուց ամենէն փառաւոր յաղթանակը , որ կաթողիկեայ Եպիսկոպոսի մը շիրիմը կրնան զարդարել : Հաւատոյ և կրօնից պաշտպանութեանը մէջ Եկեղեցական առաքինութեանց , և դիւցաղնական գործոց արգասիքը եղող վառաց նշանները :


Եթէ որ կենդանութեան ատենը իր անշքասէր համեստութենէն ակնածելով իրեն ազգային և կրօնական բարերարութեանց հանդիսական և երախտագէտ շնորհակալութիւն մը մատուցանելու կարող չէինք եղած , զայն հիմայ իր դամբանին վրայ նուիրելը մեզի սրբազան պարտք մըն է , որուն դառնալով կը փութամ ընծայելու նաև այդ վերջին խօսքը , որով այս անցաւոր երկրիս վրայ ամեն կեանք , ամեն զօր , ամեն սիրոյ կապ , ամեն մեծութիւն և ամեն վիշտ վախճան կունենան :

Ընդունէ՛ ուրեմն, ո՛ խոստովանող Հայր, այս հրաժեշտի ող-
ջոյնս . զոր քեզի կը մատուցանենք, առ-ի սեղանոյ կենդանւոյն
Աստուծոյ, և առաջի նշանաց հաւատոյս, որ քեզի և մեզի միան-
գամայն հաւասար եղած էր :

Երանի՛ թէ այս ներկայ սերունդս, որ իրեն ընթացքին մէջ
յողդողդ կը վարանի, քու տուած ընտիր օրինակիդ նմանէր 'ի
հաւատս, 'ի բարեպաշտութեան, և 'ի բարեգործութեան : Երա-
նի՛ թէ անիկայ քու շաղկապդ հետեւելով իրեն երջանկութիւնը
չփնտուէր աշխարհային ունայնութեանց, և մտաց մոլորութեա-
նը մէջ, այլ խնդրէր զայն 'ի ճշմարտութեան, և յԱստուածային
փառս :

Իսկ Դուք, ո՛ Հաւատացեալքդ Տրապիզոնի, ձեզի մահուան
անկողնոյն մէջ աւանդ ձգած Հայրական սիրտը յարդանօք պահ-
պանեցէք, զոր և յաւիտենականութիւնն իսկ ձեր որդիական սի-
րոյնմէ չի կրնար բաժնել : Ձեր Հովիւը և Հայրը յաւիտեանս պի-
տի վայելէ այն երջանկաւէտ կեանքը երկնային լուսեղէն խորա-
նաց մէջ, զոր իրեն խոստովանողական մահը, և Եպիսկոպոսական
արիութիւնը կանգնած և պատրաստած են 'ի խորհրդականն Ե-
րուսաղէմ :

Մինչդեռ իր մահկանացու մասը հոս արդարոց քնոյն մէջ կը
ննջէ, իր պահպանութեանը կարգուած Հրեշտակը անոր շիրմին
վրայ պիտի հսկէ, և խաղաղ լուութեան հանգիստը հոն անվըր-
դով պիտի տեսէ մինչեւ յօրն վերջին, յորում Աստուծոյ պիտի
յայտնէ իր արդարոց և խոստովանողաց իրեն վերջին յաւիտե-
նական փառաց հանդէսը :



Դ Ա Մ Բ Ա Ն Ա Կ Ա Ն

ԵՐԱՆԱՇՆՈՐՀ ԿԻՒՐՂԵԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ո՞հ այս ի՞նչ տխուր տեսարան է որ այսօր աչքին առջին կը ներկայանայ, այս ի՞նչ սրտաշարժ հանդէսներ՝ որ սա նշանաւոր բնակարանիս մէջ կը կատարուին. այս ի՞նչ սուգ ու թախժութիւն է՝ որ բոլոր հաւատացելոց դէմքին վրայ նկարուած կը նշմարուի :

Իայց ո՞վ է սա մէջ տեղ բազմող ալեղարդ ծերունին. Հովուական Գաւազանը ձեռքը, Հայրապետական խոյրը գլուխը, Եպիսկոպոսական մատանեաւն ու զգեստուքը զարդարուած ամէնուն աչքը ու դիտողութիւնը յինքն կը գրաւէ : Որուն սպիտակափայլ ճակտին վրայ կը շողան անմեղութեան հետ իմաստութիւն, սրբութեան հետ արիութիւն, նախանձաւորութեան հետ խոհեմութիւն, և ամէն առաքինութեանց հետ անթառամ և անմոռաց նահատակութեան մը փառքն ու պատիւը : Ո՞վ է, կ'ըսեմ, սա շնաշխարհիկ անձը, սա հազուադիւտ հովիւը, սա անզուգական Հայրապետը, զգօն Հովուապետը, սա անընկճելի ճշմարտութեան ակոյանը, և ճշմարիտ ազգասիրութեան մը զոհը, սա կրօնքին արի ու քաջ խոստովանողը. ո՞վ է, բարեպաշտ ժողովուրդք, կը ճանչնամք դուք զինքը, գիտե՞ք անոր առաքինափայլ ու ճգնասէր վարքը, կը յիշե՞ք անոր յաւերժական յիշատակաց արժանի վարմունքը . . . : Ո՞վ իմին աչքերուս աղի արտասունքներն, իջէք յորդութեամբ, իջէք վասն զի այս անդուծ մահուան սուր մանգաղին տակը ինտոլ Պատուական Հայրապետը, կիւրղեան Յովհաննէս Եպիսկոպոսն է, մեր Սրբազան Հայրը, Տրապիզոնի Չահը, Պոնտոսի փառքը, Հայաստանի պարծանքը, Ազգիս մէկ փայլուն աստղը, ամէն ազգաց սիրելին ու մեծարելին, առաքինութեան ու դիտութեան վերջապէս մէկ աննման օրինակը :

Ո՛վ անդուլթ մահ նախանձեցար մեր այս դառն վիճակին մէջ ունեցած մէկ մխիթարութեանն ալ, ու զայն յափշտակեցիր մեր ձեռքէն ՚ի սուղ ժամանակի, թողլով զվեղ ամենքնիս ՚ի սուղ անմխիթար . . . : Բայց մի՛ կարծէր յաղթանակել, վասն զի Անիկայ չ՛մեռաւ, այլ կենդանի է, կենդանի մեր ամենուն սրտին ու մտքին մէջ, Անոր քաղցր ու բարի յիշատակը իր հարազատ որդիքներուն կուրծքին վրայ ոսկի տառերով յաւիտեան անջնջելի ու դրոշմած պիտի մնայ . Անոր գովելի անունը յորդուոց որդի պիտի յիշուի : Այն կենդանի է Անիկայ, որուն երկիրս այ՛ չ՛կարենալով արժանաւոր բնակարան մը ըլլալ, թուաւ հողւով անմահից տաճարը . իւր հանդիսորդ Գանալու, իր բաղմարդիւն կենացը անչափ քրտանց ու վաստակոց անմահական ու արժանաւայել պտուղները վայելելու, և ո՛հ, ի՛նչ հիանալի կեանք, ի՛նչ զարմանալի վարմունք :

Բարեպաշտ ու Աստուածասէր ծնողաց զաւակ . ՚ի մանկութեան զարմանալի իւր խելօքութեամբ, քաղցրաբարոյ և սիրուն կերպերովը, ՚ի պատանեկութեան յամենայնի հլու և հըպատակ իր ծնողացը . ուսումնասէր և յառաջագէտ՝ ՚ի դիտութիւնս, առաքինութեանց սիրովը վառուած միշտ իւր բաղձանքները առ Աստուածայինսն ձգտելով՝ Աստուծոյ տաճարին մէջ իւր ստեղծողին կատարելապէս ծառայելու մտօք, կարհամարհէ զաշխարհայինսն վեհանձնութեամբ ու իրեն վիճակ կ'ընտրէ Եկեղեցականութիւնը, որուն հասնելու համար ամէն ջան ու ճիգ ՚ի դորժ կը դնէ . գիշերները հսկելով աղօթիւք և ուսմամբ կ'անցնէ, ցորեկները նոյն իսկ անմեղ գրօսանքներէ ու զուարճութիւններէ իր անձը զրկելով . ունեցած վայրկեաններն ու ժամերը իր միտքը լուսաւորելու և կրթելու միայն կը դորժածէ :

Ո՛վ կրնայ պատմել Անոր եռանդուն ոգւոյն ունեցած զարմանալի դորժքերը, երբ իր վախճանին հասնելու համար, ամէն վտանգ աչքը առած, երբեմն լայնատարած ծովերը ճեղքելով կ'անցնի, երբեմն ալ լեռներն ու ձորերը կը կտրէ ամենադժուարին ու վտանգաւոր ճամբորդութեամբ : Ո՛չ վշտերը, ո՛չ աչ-

խատանքները , ո՛չ վտանգները , չեն կրնար երբէք ղինքը վախցնել ու ետ կեցնել իր Սուրբ բաղձանքէն :

Վերջապէս իր երիտասարդութեան մէջ կ'ընդունի քահանայութեան Սուրբ կարգը 'ի Մերտին , ու ըստ ամենայնի այս բարձր աստիճանին ոգին հազած , կը մտնայ անոր լայնածաւալ ասպարիզին մէջ , ուր ալ քաջութեամբ կ'սկսի իր հոգեւոր արշաւանքները , բայց իր ոտքերը դադար կը դտնան սիրոյն հայրենեացը մէջ , հոն իւր եղբայրները ու սիրելիները հոգեւոր իմաստութեան կարօտ տեանալով՝ իր անձը բոլորանուէր կը դընէ անոնց երջանկութեանը համար : Եւ իրօք անոր նախնական աշխատութեամբ ժողովրդեան մէջ կ'արթննայ առաքինութեան և ուսումնասիրութեան ոգին , այնպէս որ քիչ ժամանակի մէջ նոր կերպարանք մը կ'առնէ իրեն հոգոցը յանձնուած հօտը : Բայց աւա՛ղ որ հոգւոց թշնամին կը նախանձի այս բարեբաղդ ժողովրդեան երջանկութեանը , որով կ'սկսի հակառակութիւններ յարուցանել անոր դէմ ու արգիլել իւր պաշտօնը համարձակ կատարելու . մինչեւ անգամ սուտ եղբայրներու ձեռօք խուարային բանտերու մէջ ծանր շղթաներու տակ հեծել կուտայ . և այսչափին դոհ չըլլալով՝ այն աստիճան անոր դէմ հալածանքը կը սաստկացնէ , որ Պոնտոսէն մինչեւ յՍտալիա աքսորեալ կուտայ : Այս առաքինափայլ քահանայն իր հաւատքին համար ոչ միայն հալածուիլն ու աքսորուիլը , այլ նաեւ արին թափելն անգամ իրեն փառք ու պարծանք սեպած ըլլալուն , արիական հոգւով ամէն նեղութեանց ու վշտերու դիմագրաւ կըլլայ . և կատարեալ համբերութեամբ էն ծանր խաչերն ալ ուրնախութեամբ կը կրէ : Ասոր վկայ են Փացայ , Սամոն , Մարզուան ու Լնկիւռի , և այլ շատ մը երկիրներ , որոնք Անոր նահատակութեանցը ակնատես ըլլալու , և զարմացմամբ եւս դիտելու բաղդաւորեցան : Բայց Դուն , ո՛՛ Տրապիզոնի ժողովուրդ , այն ի՞նչ մեծ խնդութիւն ունեցար , երբ հալածանաց դառն ժամանակին՝ ազատութեան ու խաղաղութեան դար մը յաջորդելով քու նորաբողբոջ Հովիւդ նորէն յաղթական փառօք քե՛

զի վերադարձուց : Անոր նախանձաւորութեան ոգին իր ժողովրդեանը տեսութեամբը կրկնապատիկ արիացած , և ամէն արդեւքներէն բոլորովին զերծ ու ազատ մնացած , ա՛լ սկսաւ իրեն ընթացքը այնպիսի կարգի մը դնելու , որ իւր անձին յառաջադիմութեամբը առաջ կը մղէր զժողովուրդը , և ժողովրդեան առաջ երթալովը ինքը եւս քան զեւս կը զարգանար առաքինութեամբ ու իմաստութեամբ :

Ամիսները ու տարիները սահած անցած տոեանին՝ հիացմամբ կը տեսնային Տիրոջը այգւոյն ու անխոնջ մշակը՝ կամ 'ի քարոզութիւն բանին կենաց , կամ Եկեղեցւոյ մէջ իր հոգեւոր պաշտամանցը պարապեալ , կամ իր խուցին մէջ առանձնացած , երբեմն աղօթքով , երբեմն ընթերցմամբ , երբեմն ալ պէսպէս ճգնութիւններով զբաղած . կամ յայցելութիւնս հիւանդաց , կամ 'ի տես աղքատաց և որբոց , և կամ մանկուոյն դուխը 'ի դասատուութիւն : Սոյն այս կատարեալ ու առաքինի կենօքը , նախանձելի էր քահանայից դասուն , պատկառելի ժողովրդեան , մեծարելի էր աւագանւոյն , ընտիր առաջի Եկեղեցւոյ , և միշտ հաւատարիմ քաղաքական իշխանութեան , որով և արժանի եղաւ մինչեւ անգամ Եպիսկոպոսական բարձր աստիճանին ալ վերանալու :

Այս նոր ընթացքիս մէջ ալ պայծառացաւ ու փառաւորեց և քան զեւս իւր վիճակը . որովհետեւ այս սակաւամեայ շրջանին մէջ ալ՝ այլ և այլ կատարելութեամբ կղերն ու ժողովուրդը իմաստութեամբ կառավարած ժամանակը , չէր դադրեր նաեւ բնաւ՝ լուսաւորելու իր իմաստուն խորհուրդներովը շատերը , որ վատահութեամբ և համարձակութեամբ իրեն կը դիմէին , անանկ որ այս 'ի քահանայութեան անխոնջ և անհանդիստ մըշակը , յԵպիսկոպոսութեան և ըստ ամենայնի անխոնջ ու անհանդիստ հովիւ մը հանդիսացաւ : Ապա ի՞նչ ըսենք այն անզուգական փառքին ալ զոր ունեցաւ , երբ արժանի եղաւ վատիկանեան Տիեզերական Սուրբ ժողովոյն Հարցմէ մինն ըլլալու , կը թողում այլ ուրիշ ամէն փառքերն ու պատիւները՝ զորս այլ

և այլ պարագաներու մէջ իւր արժանապատուութեամբը ստացաւ ու խոնարհութեամբ ալ վարեց : Այլիկ տղոց հարկաւոր կրթութեան համար պատշաճաւոր դպրոց մը կանգնած ու զայն ընտիր վարժուհիներով հոգացած , և զանոնք օր ըստ օրէ յառաջացնելու համար հարկաւոր միջոցները բանեցուցած ատեն , միւս կողմանէ ալ մանչ տղայոց համար վայելուչ դպրոց մը կանգնելու նիւթերը պատրաստելէն ետ չէր կենար : Եւ Դու Տրապիզոն , Դուն մինչեւ հիմայ զայն կառուցեալ կը տեսնայիր , եթէ դժբաղդարար ամէն բան երող ու միկող արտասուալի և քսամների հոգեւոր ապստամբութեան կրակը չ'վառէր ու չ'բորբոքէր նաեւ քու մէջդ ալ :

Ո՛վ անիծեալ ապստամբութիւն որ մեր ամենասիրելի Հօր կենացը թելը տարածամ խղելու պատճառ եղար , մէկ իցիւթէ այսպիսի մահ մը ըլլար միութեան ու խաղաղութեան կապ մը և Եկեղեցւոյ պայծառութեան շարժառիթ մը :

Վերջապէս այս ամենակատարեալ հնազանդութեան , խոնարհութեան , ժուժկալութեան ու գիտութեան դիւցազունը , սրբութեամբ կ'ապրի , սրբութեամբ ալ կը մեռնի : Իր տասն ու հինգ աւուր ծանր ու հոգեւարք տաղնապներուն մէջ սրբափայլ շրթունքներուն վրայ և ոչ փոքր ինչ տրտունջ ու դանդաւան մը կը ըսուի , ըստ ամենայնի Աստուծոյ օրհնեալ կամացը համակերպեալ կընդունի սիրով մահուան այս դառն բաժակը , որով կ'օրհնէ իւր սիրելիները , կը ներէ իւր թշնամեաց և ապա գորովանօք կենաց փայտն ընդգրկած իւր ամենատուրք և Անաբաթա Յղացեալ Մօր գիրկը կ'աւանդէ իւր Սուրբ Հոգին :

Իսկ Դուն ո՛վ երջանիկ Հայր . դուն որ հիմայ անտրտում մէջ Աստուծոյ սէրը կը վայելես . Դուն որ ասանկ հրաշալի օր մը մահկանացուն անմահութեան հետ փոխելով հրեշտակաց թագուհւոյն վերափոխման փառացը գունդագունդ զուարթնոց ընկերակցութեան մէջ խառնուած , նորին կուսական Աստուածամայրութեան անմահարար շուքին ներքեւը պատսպարեալ յերկրէ յերկինս կը փոխադրուիս . Դուն քու հայրական օրհ-

նութիւններդ մեզի տառապեալ որդեկացդ թողնելէն զատ, տուր նաեւ մեզի կցորդ լինել քու ոգւոյդ, նախանձաւորութեանդ և առաքինութեանցդ: Եւ ինչպէս որ Գուս դքսհանալու թեան փառքը յիսունուերկու տարուան երկարատեւ շրջանին մէջ անարատ պահեցիր, աւելցնելով նաեւ օծեալ ճակատիդ վրայ անարատ և անվթար Եպիսկոպոսական արիութեան մը փառաւոր պսակն ալ, աղօթէ՛ որ նոյնպէս մենք ալ Քու անարժան որդիքներդ մեր պաշտամանը մէջ անարատ ու անվթար մնալով, մխիթարենք ու վշտացեալ և այրիացեալ ժողովուրդդ: Գեռ մեզնէ չբաժնուած՝ սլ Երանաշնորհ Հայր՝ տնւր Քու Աստուածապարգեւ օրհնութիւններդ առատութեամբ այս ժողովրդեանդ ալ, որպէս զի այսչափ հակառակութեանց ու նեղութեանց մէջ՝ իրենց Սուրբ Հաւատքին վրայ հաստատ ու ամրապինդ կենան, և բարի գործքերով ու առաքինութեամբ լեցուած, ամէնքնիս ալ միաբան, ինչպէս նաեւ մեր մորորեալ եղբայրներն ալ, հուսկ ուրեմն մեզի հետ միանալով՝ արժանի ըլլանք օր մը Քու քաղցր շրթունքներէդ լսելու յարքայութեան երկնից այն ուրախարար ձայնը թէ՛ « ահա ես և մանկունք իմ »: Ուր նաեւ կարենանք Քեզի հետ փառաւորել յաւիտեան զՓրբ կիչն հոգւոց մերոց և զՄայրն նորա Ամենօրհնեալ Ամէն:


Պ. Վ. Խ.



Յիշատակ արդարոց օրհնութեամբ եղեցի :
Սուրհանդակներն զիբրի ապառ ըլլա օրսուն :

Էվվէթ ազիզէր՝ ազիզ փետերիմիզ շու ֆանիտէ Էօմբիւնիւ
թէքմիլ իտիպ ախրէթէ կէօչ իթաի . պիզէ եայլընըզ քէնտի
զիբրինի պըրագարագ : Պէլի պիզէ քէնտի Էօմբիւնիւն զիբրին
տէն մա՛տաա պիր շէյ պըրագամաը , քի օնուն մէաճինի իտիպ
թէսէլի օլապիլէլիմ : Ֆագաթ պու ազիզին մէաճինի պէնիմ կիպի
պիր զայըփ լիսա՛ն մը թէքմիլ իտէճէք . ա՛խ , խայր խայր մէմէ
քէթտէ օլան ճէմի ճէմաաթ . կէրէք միլլէթի ապիլյէմիզ վէ կէ
րէք միլլէթի սայրիէ ճէմիսի շահատէթ իտէր պու ազիզին հէմ
րուհանի վէ հէմ ճիամանի թէքմիլլիլլէթինէ . օնուն իլմի րուհա
նիտէ օլան ազիմէթինէ , վէ տիւնեալի բօլիթիզա զըմմընտա օ
լան տիրայէթինէ : Ֆագաթ մատամ քի պէն տախի թըփըլ չա
զըմտա պու ազիզին թահար իտարէսինտէ պուլունուպ օնուն
թաթըր նասիհաթլարընա հիսսէտար օլմուշում , վէ շու ֆահա
նալըզ մէսնէթինէ եթիշտիքտէն սօնրա երրմի սէնէտէն միւ
թէճալուզ օնուն էլինիլն ալթընտա օլարագ փէտէրանի մուհապ
պէթինէ շահէսթէ օլտուղում միլթէշէքըլւրէն պիր դաչ չիֆիթ
սէօզ սէօլլէմէյէ ճէսարէթ իթմիշիմ :

Պու ազիզ փետեր թըփըլ չազընտան նէ մէսնէթ իչին չազ
ըըմըշ օլտուղունու պէյան իթմէք իսթէյէրէք , չօճուզլարա
սէվկիլլիլ օլան օյունլարը թէրք իտէրէք , էյլէնճէսի պօյտաշլա
րընը պաշընա թօփլայըպ , օնլարա հօճա օլարագ սայքի օնլարա
օգումագ եագմագ տէրս վէրիյօր կիպի շէյլէր իտի էյլէնճէսի :
Էվվէթ՝ մագսըմ չօճուզլարը թէրպիլլէ իթմէքտէ օլան հավվէ
սինի թէքմիլլէն իճրա իթաի եաշը պիր ազ իլէրի կիթտիքտէ .
չօճուզլուգտա էյլէնճէ վէ թաղլիա իթտիլի մէսնէտի իւզէրինէ
ալըպ , պունճա զահմէթ վէ տիարի գուրպէթլէրտէ թահալլ իթ



տիյի իլմի հեմիրելէրի օլան չօճուգլարա էօյրէթմէյէ սարֆ իտէ-
րէք պունտան եալընըզ քէյֆ տույար վէ պունու արզ իտէր իտի ,
հէր ան էօնիւնէ աչըլմըչ օլան զէնկինլիք շէրէֆ վէ ըայէթ տէր-
եալարընը թէրք իտէրէք եալընըզ հեմիրելէրինի ըըզլանտըր-
մագ վէ թէրպլյէ իթմէք իտի պիւթիւն արզիւսիւ վէ ճահա ու
ղայրէթի : Պու սէպէպէ տախի Ալլահա խըսամէթճի օլմագ թա-
րիգինի իւյիւտլէյիպ պիր թարաֆտան սապի սիւպեանըն թէր-
պլյէսինէ մէշղուլ օլտուղու եէրտէ օ պիր թարաֆտան տա իլմի
իլահիյէ թահսիլինէ մէշղուլ օլուպ արզ իթտիյի քահանայըզ
մէնէտինէ շայէսթէ օլտու : Ֆազաթ պունտան սօնդրաքի կէօս-
թէրտիյի համիյէթի վէ զայրէթի քիմ թարիֆ իտէպլիլը . կէրէք
քիլիսէ թէտպիրլէրի հագգընտա , կէրէք ճէմաաթը պունճա ըու-
հանի թալիմաթլարընըն աղըր եիւքլէրինի իւղէրինէ ալըպ իհ-
թիարըլարա փէտէր , կէնճլէրէ գարտաշ , քէնտինտէն սինճէ քիւ-
չիւք օլանըլարա էվլատ նաղարըյլա պագըպ հէր պիրինին իգթի-
զասընա կէօրէ գայրըրը կէօղէտիր վէ թէսէլի իտէր իտի . հաս-
թալարա վէ սաղլարա Ալլահ թէնպիհլէրինին թէմիզ թաամլա-
րընը զանի զանի թէվճիհ իտիպ քէնտի քիւչիւք ճէօմաաթընը էն
պէօյիւք միլլէթլէրէ իպրէթ վէ էօրնէկ իթմիշ իտի :

Ֆազաթ զալիմ շէյթան պու ազիղին պու թարզ համիյէթի
ղայրէթինէ թէհամմիւլ իտէմէյիպ միլլէթի իթթիլալա թահրիզ
իտէրէք պու ազիղի քէնտի սիւրիւսիւնտէն այրըպ Ատալեայա
մէնֆի իթտիրտի . քի օնտա օնսէքիզ այ սէվիլիւլիւ ճէօմաաթը-
նա հասրէթ գալտըգտան սօնդրա Տէվլէթի-Ալլէնին ինայէթի
իլէ թէքըրարէն ճէօմաաթընա սահիպ օլտուգտա կէօթէրտիյի
ճահա ու զայրէթէ շահիտ , պու կիւնքիւ կիւն քէնտինէ տիւշ-
ման օլուպ քէնտինի խօրլայանըլարը տավէթ իտէրիմ : Շէօյլէ քի
օնլարտան փէք չօղլարը զայպ իթտիքլէրի համիյէթիլի չօպանը
թէքըրար պուլտուգլարը իչին քէնտիլէրինի մութըլու սայտըզ-
տան սօնդրա , թէքըրար օնու զայպ իտիպ օնուն էօմիւր պախշ
նատիհաթլարընտան մահրում գալմամագ սէպէպի իլէ պու ա-
զիղին տիարի գուրպէթլէրտէ տախի Ալլահըն քէլամընը վաղ

ի թմեք արգուտունա մէն վէ էնկէլ օլմուշար տըր : Չիւնքի պու աղիդ փէտէր ճէօմաաթընա Ալլահա օլան պօրճլարընը թաալիմ ի թմէյի քիֆայէթ սայմայրայ , վէլինիմէթիմիդ օլան Տէօլլէթի Ալլէյէ օլան պօրճլարընը նասիհաթ իտէրէք ծնլարը հիւքիւմէթի Աէնիյէ ինտինտէ տախի մագպուլ կէօթէլմէյէ իդաամ ի տէր իտի : Պու սէպէպէ տախի պիր միւտտէթտէն սօնղրա փիւ գոպուլուգ մէսնէտինէ տալէթ օլունուպ , ֆարապա քէնտի բատէթինէ գարըր , վէ սայքի պիր բուհանի ճէպր իլէ պու մէսնէտի «նընա ալրայ քիլիսէճէ էն ճէսիմ մէսնէտէ շայէսթէ օլարագ էվլատլարընը շաղ ու մէսրուր իլլէտի : վատիկան ումումի մէճիլիսինտէ սէքիդ եիւզ Հայրապետէրին պիրիսի օլարագ եանըլմաղլըր մատտէսինի իմզա իտէն քիլիսէ չօպանլարը սըրասընտա պուլունուպ տիւնետատա իմզա իթտիլի սահիհիլլին շէրէֆինի ալմագ իլլին պու կիւնքիւ կիւն կէօյէրէ տօղբու եօլ բէվան օլուպ կիթտի : Ֆադաթ շու իմզա իլէ թաստիգ իթտիլի հէսր գոսթիան նէ դալիմ ֆէլաքէթլէր եաղտըրմատը պու աղիլին պաշընա : Պէլի պէլի էյլիքէրէ գըսկանան մէլուն պունտա տախի պու աղիդ փէտէրին թալէհինէ գըսգանարագ նէֆսի քէնտի էլինտէ թէրպիլլէ օլան զաթլարը այաղա գալտըրարագ տէօրթ սէնէտէն պէրի հէր տիւրլիւ սըղլէթ վէ եիւրէք օյնաթմալարընա կիրիֆթար իթտիքտէն սօնղրա , նիհայէթինտէ տախի իպատէթիեհաճը օլան քիլիսէսինտէն վէ սաքին օլտուլու էվլինտէն ջապթիլլէ մարիֆէթի իլէ տիշարը իթմէյէ արը իթմէտիլլէր : Ֆադաթ սէֆիլլէրին պու նապէճա հարաքէթլէրի պու աղիդ փէտէրին թէմիդ եիւրէյինտէ գատէմ իտէն փէտէրանի մուհապպէթի տահա զիյատէ աշիքեար իթմէյէ վէսիլլէ օլտու . էվլվէթ աշիքեար կէօրիւնտիւ քի պու աղիդ փէտէրին եիւրէյինի ինճիտէն նէ քիլիսէսինտէն մահրում օլտուլու իմիշ , վէ նէ տէքէնտի եօղ մալի օլան էվլինտէ պու թարդ պիր եապանճը կիպի տիշարը օլմաար . իլլա քէնտի էլինտէ թէրպիլլէ օլմուշ , վէ էլան էվլատ նաղարըյլա պագտըրը վէ սէվտիլի վէ ճանլարընըն իտէլասիլլէթի իշիւն կիճէ կիւնտիւզ ահ ու ֆիղան իթտիլի զաթլա .

ընն զայն թ եօլունտա իլերիլէմէլերի իմիշ : Պու սէպէպէ սատըգ
էվլատլարըլլա պերապէր օտա դարուսունտան տիշարը չըգտը-
ղը վագըթ կէօղլերինն վէ թիթրէյէն գօլլարընը կէօլերէ գալ-
տըրըպ “ ան ազիղ փէտէր սէնին միւպարէք էվլատընլա պիւ-
լիքատէ Հայր Եօլ Գոյ ” փէտէր պունլարա պաղըլլա շաղըրմայա
ճէսարէթ իտէմէմ . Փագաթ իւք շէհիտին սուրբ Սպէֆաննս իլէ
պիւլիքատէ “ Տէր Ք համարէր Գոյ ” Ի Քու , էֆէնտիմ շու սէֆիլլերէ
իթտիքլերի պինամուսլուղու կիւնահ եազմա տէյի ֆիղան
իտէրիմ տէյերէք գարուսան տիշարը չըգտը , ծնլարը Ալլա-
հըն ինտինտէ սիւիէր իթմէյէ չալըշարադ :

Իմտի յիշարակ արդարոյն օրհոն-իւեամբ ելեցի . չիւնքի պու ա-
զիղ Փէտէրին թէքմիլիլէթինէ եալընըղ Տրապիզոն էհալի-
սի տէյիլ . Ելլա էնկիւրիւ՝ Մարսլվան՝ Ամասիա՝ Արվաղ՝
Թօգաթ՝ Էրզրում վէ Արդուլին էհալիլերի տալի շահիտ օլտուգ-
տան մա՛տտա , պունուն էլինին ալթընտա օլուպ ծնա էվլատ օլ-
մագ արզու իտէնլէր տիրլէր : Պու սէպէպէ պիլա վիէրվա էֆէն-
տիմիլ Բրիստոսուն սէօղիւնիւ թէքրարլայըպ պու ազիղ փէ-
տէր էօլմէտի . Ելլա շերահաթա կիթմէյէրէք էօլիւմտէն էօմիւ-
րէ թէպտիլ օլտու տէյէպիլիլիմ՝ ֆոխեցա՝ Ի ճահոսանէ Ի կիսնա :
Իմտի շաղ օլուն ծնուն սատըգ էվլատլարը , սիղին կէօղ եաշ-
լարընըղը , էվվէթ՝ էվվէթ փէտէրիմիլի կէօքլէրէ էօլ րէ-
վան իթտիք , հէր նէ դատար տա արթըգ ծնու եիւղ պէ եիւղ
կէօրմէյէճէք իտէք , պու ճիւմիէ ծնուն պըրագտըղը էյի իպ-
րէթլերին զիքրի պիղիմիէ տիր : Էվվէթ քէնտիտի էպէտիլիլի կէօչ
իթտի , լաքին էյի իպրէթ պըրագտը քահանալարա քէնտի ար-
գասընտան կիտիպ ճէմաաթըն իղթիղալարընտա ապա խաթըր
կէծնիւլ պագմայարադ Ալլահտան իլան օլմուշ կերչէքիլէրէրի
վաղ իթտիքատէն սօնդրա , ծնլարա Փարզ օլան պօրճլարընը էտա
իթտիքմէք իչիւն ճահտ ու զայրէթ իթմէք իչիւն : Էյի իպրէթ
պըրագտը իհթիարլարա , քէնտի կիպի կիւն պէ կիւն էյի էօ-
լիւմէ հաղըրըգ իչիւն սարֆ իթմէյէ գալան էօմիւրլէրինի : Է-
յի իպրէթ պըրագտը նիհայէթ ումուլի սաղլաֆտա ճէմաաթա

հալածանք վէ սըղլէթ վազըթլարընտա նէ թարղ տավրանմալ
լը վէ նէ կէօնէ թէհամմիւլ իթմէլի օլտուգլարը իչիւն : Պու
սէպէպէ պու ազիզ փէտէրին պըրագաղըը էյի իպրէթլէր ար-
գասընտան կիտէրէք ծնուն զիքըրինի իտիպ Ալլահա շէրէֆ վէր-
մէլէլիղ :


Իմտի սէն տախի եան ազիզ փէտէր , նասըլ քի սաղլըղընտա
պիզի գայըրըր կէօղէտիր վէ թաթլը նասիհաթլարըն իլէ պիզի
պէպէր իտին իսէ , շիմտի քի կէօյլիւ փէտէրին տիզարընտա ,
ծնու եիւզ պէ եիւզ կէօրմէյէ շայէսթէ օլտուն , պիզի ունութ-
մա , բէճա էթ պիզիմ իչիւն Ալլահա քի սէնին պըրագաղըըն
էյի իպրէթլէր արգասընտան կիտէրէք սանա շայէսթէ էվլատ
օլա պիլէլիմ . վէ Ալլահա ալգըշ վէրէրէք սէնին զիքըրինի իտէ-
լիմ : Յէշգուի աբգարոյ օրհնումեամբ ելէյի :

1874 Օգոստ . 19

Բասրիլէրին ժալընտա
կիւրղեան Եպիսկոպոսուն թաղումընտա
սէօյլէտիմ .

Ս, Վ, Ջ,





23502 - 23504(3f)
8043 - 8075(9k)
5211 (7f)
5835 (2f)

«Ազգային գրադարան



NL0109793

«Ազգային գրադարան



NL0109792

«Ազգային գրադարան



NL0109791

«Ազգային գրադարան



NL0109790

«Ազգային գրադարան



NL0109789

«Ազգային գրադարան



NL0235878

«Ազգային գրադարան



NL0109788

«Ազգային գրադարան



NL0109794

«Ազգային գրադարան



NL0108765

